ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 սեպտեմբերի 2020թ. թիվ 628-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ- ԻՆ, «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԱՐԳԱՌԻ Վ.ԲԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ- ԻՆ, «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃՈՃԿԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ- ԻՆ ԵՎ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ- ԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 240-Ն որոշման 1-ի կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2.1-րդ կետով, հիմք ընդունելով համաձայնության մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 28.08.2020թ. թիվ 01/17.1/23409-2020 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Հանրակրթություն» ծրագրի (դասիչ՝ 1146) «Հիմնական ընդհանուր հանրակրթություն» միջոցառումով (դասիչ՝ 11002) նախատեսված գումարի շրջանակում «ՀՀ Լոռու մարզի Արջուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին լրացուցիչ հատկացնել 470.0 հազ. դրամ, «ՀՀ Լոռու մարզի Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 630.0 հազ. դրամ, «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 800.0 հազ. դրամ, «ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 500.0 հազ. դրամ՝ վերանորոգման և նախագծային աշխատանքներ իրականացնելու նպատակով:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

02/09/2020

X

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 2
ք.Վանաձոր